

24247

Дуптин Ублѣжнѣ

Аууѣт ѣпѣтѣ

891.99-192

U-50

У. П. П. П.

1911

CP

2003

147

ԱՐԷՏ ԱՃԵՄԵԱՆ

ՌԱԶՄԻ ԵՐԳԵՐ

ՆՈՒԷՐ

ԱՆԴՐԱՆԻԿ

Հ Ա Յ

ՋԻՆԻՈՐՆԵՐՈՒՆ



Կ. ՊՈԼԻՍ


ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՀՕԼԱՍ

1911

891.99-192
Ա. 50

ՊԱՐԷՏ ԱՃԷՄԵԱՆ

ՌԱԶՄԻ ԵՐԳԵՐ



ՆՈՒԵՐ
ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ԶԻՆՒՈՐՆԵՐՈՒՆ



14708

1911

11057-ՎԷ

Ե Դ Ո Ւ Խ Ո Ս Ք

Ընկերային եւ քաղաքական իւրաքանչիւր քաջանի մէջ յայտնի է որ ազգերը կ'ունենան իրենց ուրոյն վիճակը եւ առանձին հոգեբանութիւնը, եւ գրականութիւնը կ'ըլլայ անոնց նշանիս եւ անկեղծ արտայայտութիւնը :

Ազգային իստակները եւ ձգտումները կապ ունին հետեւաբար իրաց այս վիճակին հետ, եւ ժողովրդեան մը զգացումները կը ձեւափոխուին եւ կը կազմուին ընկերային հոգեբանութեան այս օրէնքով :

Օտար ազգերը ունին՝ իրենց քաղաքական վիճակին համեմատ՝ զինւորական եւ մարտական գրականութիւն մը. — Իսկ մենք ունեցանք Յեղափոխութեան, Ազատասիրութեան եւ մեր Հերոսներուն մարտական գրականութիւնը : Այսօր ալ **ի ն գ ն ա թ ի ր ա ք ա ր** պիտի մշակենք զինւորական գրականութեան նոր նիւղ մը որով պիտի քաջալերենք մեր ցեղը եւ զաւակները՝ Օսմ. Բանակին մէջ արի զինուորներ դառնալու համար :

Ներկայ **Ռազմի Երգերը** գրողը՝ գրեթէ զինուոր մըն է, զի՛ զենքը եւ զբիշը հաւասարապէս սիրողներն է :

Պէտք է աւելցնենք որ այս **Ռազմի Երգերը** գրողը ներեցնում է՝ օրուայ հայ զինուորներու կեանքէն, եւ Ֆրանսական ու Իսպանական քանի մը գրուածներէ (Պասուլ-Գաւաթ, Հերոսապանը եւ Դասալիքը) :

Ես կը հաւատամ որ **Ռազմի Երգերը** պիտի սիրուի հայ երիտասարդներէն որոնք կոչուած են Օսմ. Բանակին **Փառքը** կազմելու . — Ինչպէս, ասկից ուրբան սարի առաջ՝ զուշակած է մեծ զինուորական Զօրավար Մոլթէ :

Պ . Ա .



342-83



ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ
ՉԻՆԻՈՐ ԱԻԵՏԻՍ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԶԻՆԻՈՐԸ

(Եղանակ՝ Ա, հա՛ կ'երթամ սիրելի մայր . . .)

Մի՛ լար , մայրի՛կ , զիս չեն տանիր ,
 Սուրբ կրօնքէս չեն հաներ ,
 Ահա կ'երթամ զինւոր ըլլալ ,
 Հայրենիքիս տէ՛ր եմ ալ :

Սուրբ տենչովը հայրենիքի ,
 Ուսկի՞ց ի վեր բաղձայի
 Մարթին և կամ մավզէր գրկել ,
 Կողքիս ազատ սուր կրել :

Թո՛ղ հայրենիքս հանգիստ ըլլայ ,
 Այլեւս Հայը չէ՛ բայա :
 Հայրենիքին մենք ալ ենք տէր ,
 Ա՛լ ափ մը հող դուրս չեղներ :

Պատրաստ ենք մենք , հա՛ մեռնելու ,
 Հայրենեաց սիրոյն այո՛ ,
 Մենք վախ չունինք ո՛չ մէկ բանէ ,
 Թո՛ղ տուչմանը դէմ ելնէ :

Մենք անկեղծ հայ զինւորներ ենք ,
 Ծառայելու ուխտած ենք .
 Մենք կը մեռնինք ազա՛տ մահով ,
 Քան միանք վա՛տ ամօթով :

Մենք օսմանցի զինւորներ ենք ,
 Հայ , Թուրք և Յոյն եղբայր ենք ,
 Մենք վախ չունինք կռիւէ մահէ ,
 Թո՛ղ տուչմանը դէմ ելնէ :

Զ Ի Ն Ի Ո Ր Ը

(Եղանակ՝ Կռուեցե՛ք (տիեօք . . .)

Կազմ՝ և գօտեպինդ , կտրիճ հասակով ,
Զինուորն է կ'անցնի փողոցի մէջով ,
Կոճակներ փայլուն , կօշիկներ նոյնպէս ,
Քալուածքը չափով , ասպետ մ'է կարծես :

Մարզանքին չնորհիւ աղւո՛ր կեցուածքով ,
Շարժուձեւերն ազատ փառանսով ,
Բայան չէ՛ մի սա երէկուան սարուկ ,
Որ Ազատութեան չունէր իրաւունք :

Գեղեցիկ աչքեր պատուհաններէն ,
Այս հպա՛րտ տղուն նային ետեւէն ,
Հայրենի ծաղիկ , անվեհե՛ր հերոս ,
Որ ազատութեան ո՛յժը բերաւ հոս :

Երեք բաներ կան որ սիրեն զինւորք ,
Հաւատարիմ զէնք , կրակոտ նժոյգ ,
Եւ գեղեցիկը՝ աղո՛ւ նայուածքով ,
— Կեցցէ՛ զինւորն՝ ազնիւ ձաչակով :

Պ Ա Տ Ի Ո Յ - Դ Ա Շ Տ Ը

(Եղանակ՝ Պաշտակեցական խումբ . . .)

Ինչի՞ճառայէ քո հարստութիւն ,
Եթէ դու տէր չես մի մեծ պատիւի ,
Կ'ուզե՛ս ունենալ պատիւ մեծութիւն ,
Ընտրէ՛ ասպարէզ զինւորականի :

Ահա , ա՛յն ատեն դու պիտի տեսնես ,
Թէ զատ կեանք մ'ալ կայ , շատ ու շա՛տ տարբեր ,
Որուն մէջ «Պատուի համար» պիտ' բաղձաս ,
Ընդունիլ գնդակ նոյն իսկ մահաբեր :

Թնդանօթը պիտ' գրկես իբր հսկայ ,
Թ՛չնամիկն դէմ պիտի դարձնես
Եւ «փա՛ռքի համար» , թէ խորատակի նա ,
Ակուաներովդ պիտի յարձակիս :

Երբ վերադառնաս դու յաղթանակով ,
Պատիւ՝ մեծութիւն՝ քեզի կ'սպասեն ,
Գլուխդ յայնժամ պատուոյ պսակով ,
Փառաց դափնիով՝ պիտի պսակեն :

Պատիւ չեն ծախեր աշխարհի վրայ ,
Զրի ալ չեն տան իբր ոգորմութիւն ,
Պատիւ մի՛միայն անոնց կը տրուի ,
Որոնք ցոյց կուտան սրտի քաջութիւն :

Եւ քանի որ կայ մահը այս կեանքին ,
Քանի որ պատիւ՝ գրամով չգնուիր ,
Ինչո՞ւ չզոհուինք մենք Հայրենիքին ,
«Պատուոյ-Դաշտին» մէջ՝ ինչո՞ւ չմեռնինք :

Դ Ա Ս Ա Լ Ի Ք Ը

(Եղանակ՝ ԿՈՈԼ ԳԷՖ ԵՊՂ ԵՖ . . .)

Երբ հայրենիքը քեզի պէտք ունի,
Երկչո՛ւտ, ի՛նչ կ'ընես, ո՞ւր կ'երթաս այդպէս .
Երկիրդ ո՞ւմ թողուս, զայն ձգես որի՞,

Մեր բոլոր յոյսերն՝ անդո՞ւնդ կը թաղես :
Օսմանցի չե՞ս դուն, դուն աղամարդ չե՞ս,
Օճախդ հայրենի, Արարատ-աշխարհն,
Տունդ տեղդ դուն որի՞ կը ձգես,
Ներե՛ս որ անոր տիրանայ օտարն :

Կը ձգես մա՛յր, քո՛յր, քո հարազատներ,
Արտ ու պարտէզներ, կը լքես զիւրդ .

Վերջին գղջուժը օգուտ չի բերեր,

Կը քանդես ազգը և տունդ տեղդ :

Երկչո՛ւտ, ո՞ւր կ'երթաս, գլուխդ առեր,
Ո՛ւր պիտի երթաս, քեզ ո՞վ ընդունի,
Ո՛ւր որ ալ երթաս օտար են հողեր,
Եւ դասալիքը՝ ո՛չ ոք կ'ընդունի :

Մէջ մը ետ դարձի՛ր, շուրջդ դուն նայէ՛,
Տակաւին ծուխին մէջ են զիւրերդ,
Եւ մեր քաղաքաց աւերակներէ,
Արեան գորոշին չէ եղած անհետ :

Անվեհեր եղի՛ր, ե՛տ դարձիր շուտով,
Ամօթ է քեզի ըլլալ դասալիք,
Քաջ մարդը երբէք՝ վատի արարքով,
Չ'ընդունիր ջնջել Պատիւ, Արժանիք :

Իրաւունք չունին աշխարհի վրայ,
Գոյութիւն պահել՝ ո՛չ-զինւոր ազգեր .
Զի գոյութիւնը գէնքով կը պահուի,
Զի իրաւունքը՝ գէնքով կը շահուի :

Հ Ե Ր Թ Ա Պ Ա Ն

(Եղանակ՝ Մասեաց հակասէն ամպրոպ պատեցաւ)

Հերթապահ զինւորն եմ ես Օսմանցի,
Անքուն կը հսկեմ՝ օ՛ր զիչե՛րն ի բուն,
Հայրենիք հիւս յանձնուած ինձի,
Նուիրական է, բա՛րձր է իմ պաշտօն :

Ո՞վ կրնայ կենալ ինձի դէմ ալբես,
Արագահարուած՝ մալգէր է ձեռքս :

Ա՛լ մի՛ վախնար դուն, Հայրենիք սիրուն,
Թէ գայ թշնամին ես հոս պատրաստ եմ .
Ես կը հսկեմ քեզ, արթո՛ւն եմ արթուն,
Կեանքս ալ, հոգիս ալ՝ քեզ կը նուիրեմ :

Ո՞վ կրնայ են .

Ահա կ'սպասեմ, ի ժա՛մ վստանգի՛
Քո պաշտպանութեան արիւնս պիտ' թափեմ,
Ինձի դէմ ո՞վ է որ պիտ' յարձակի,
Ո՞վ պիտ' զիմադրէ՝ թէ՛ գէնքս շտկեմ :

Ո՞վ կրնայ են .

Արծուի աչքերով կը գիտեմ շուրջս,
Հեռուն և մօտը ես լաւ կը գննեմ,
Գիտեմ կարեւոր՝ փափուկ է պաշտօնս,
Վտանգը ուսկի՛ց կրնայ գալ գիտեմ :

Ո՞վ կրնայ կենալ ինձի դէմ ալբես,
Հիանալի գէնք՝ մալգէր է ձեռքս :

Հ Ա Յ Ր Ե Ն Ե Ա Յ Հ Ա Մ Ա Ր

(Եղանակ՝ Իմ հայրենեաց եղբիս վարդան)

Իմ հայրենեաց քաղցր սիրով,
Մնա՛ք բարով, զինւոր կ'երթամ.
Մի՛ լաք մայր իմ, անո՛ւշ քոյրիկ,
Մի՛ լաք նորէն ես կը դառնամ:

Մի՛ լար անո՛ւշ իմ սիրական,
Մի՛ լար չուտով վերադառնամ,
Օրուան մը չափ պիտ' չտեւէ,
Սուրբ կապած ես պիտի գամ:


Իմ հայրենեաց քաղցր սիրով,
Մնա՛ք բարով զինւոր կ'երթամ:

Որքան տարի մենք կ'սպասենք,
Զինւոր ըլլալ և ծառայել.
Ծառայել սո՛ւրբ հայրենիքին,
Անոր փառքին համար զոհուիլ:

Բայց մի անգամ պատերազմի
Եթէ հնչէ փողը մարտին,
Ա՛հ այն ատեն, տեսէք ի՛նչպէս
Գիտենք մեռնիլ սուր ի ձեռին:

Իմ հայրենեաց քաղցր սիրով ևն.

Ա՛խ, սիրական զիս չես մոռնար
Անչուշա կռուի՛ այն մե՛ծ օրը,
Վազես համիս դու իմ քովը,
— Ինչպէս Սամնոյ քաջ հարմները:



ԶԷՅԹՈՒՆՅԻ ՈՒՍՈՒՑԻԶ
ԽԱԶԱՏՈՒՐ ՏԱՏԸՐԵԱՆ

Թէ ես իյնամ՝ նահատակ եմ ,
Թէ իյնաս դու՝ հերոսուհի ,
Բայց մեր ինկած տեղն անչուշտ ,
Կ'ըլլայ սրբոց ուխտատեղի :
Իմ հայրենեաց եւն .

Վարդի թուփեր մեր արիւնէն ,
Պիտի բուսնին մէջ այն տեղին ,
Սոխակները պիտի երգեն ,
Վերայ վարդից այն պուրակին :

Ուխտի եկողն թո՛ղ փրցնէ ,
Անուշահոտ մեր վարդերէն ,
Եւ թո՛ղ յիշեն և թո՛ղ խօսին ,
Թէ մենք վարդերն ենք վարանին
Իմ հայրենեաց եւն .

ՉԻՆԵՐԻՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԷՆ

(Եղանակ՝ Ո՛հ, Ի՛նչ անուօ և ինչպէս գով)

Ո՛ւր գեղեցիկ այն հրեշտակ ,
Գոհար , բիւրեղ , սեւ աչքերով ,
Նա որ ցոլար իբրև լուսնեակ ,
Գեղաթոյր վարդ՝ իր լոյս գէճքով :

(Յորդորակ) Ո՛ւր ես աղջիկ իմ հայրենեաց ,
Ո՛վ պիտ՝ սրբէ աչքերդ թաց :

Նա իր ջնորհ և ցօղն ունէր ,
Որպէս Մայիտի թարմ չուշան ,
Աղւոր հասակ , առատ մազեր ,
Որոնց աշխարհ, չ կը հիանան :
Ո՛ւր ես . . . եւն .

Նշանածն էր նոր զինւորին ,
 — ձահիլ աղջիկ մը պաշտելի ,
 Չախը կուգար դեռ ականջին ,
 Հովերուն հետ իր գաւառի :
 Ո՛ւր ես . . . են .

Բաժանումնին շատ յուզիչ էր ,
 — Ի՛նչ արցունքներ , ի՛նչ աղօթքներ . . .
 Մէկիկ մէկիկ միտքը բերէր ,
 Անոր սիրուն յիշատակներ :
 Ո՛ւր ես . . . են .

Ծաղկահասակ գեղջկուհեաց հետ ,
 Վարդ այտերը փաթթած ի թիւլ ,
 Ինչ չէր կրնար մոռնալ յաւէտ՝
 Քաղեղն՝ լալէ , գիւմպիւլ ու կիւլ :
 Ո՛ւր ես . . . են .

Տերեւախիտ անտառի խորն ,
 Ճըլճըլային բիւր թռչուններ ,
 Հիւրի-փերի այս աղջիկներն ,
 Բողբէին ազատ պարեր :
 Ո՛ւր ես . . . են .

Երգէ՛ , աղջի՛կ , անո՛ւչ ձայնով ,
 Հայրենիքի ծառաստանէն . . .

Զինւոր դադրէ՛ դուն ալ չուսով՝
 Տխուր տխուր մտածելէն :

Հոն է՝ աղջիկն հայրենեաց ,
 Ահա՛ երգէ աչօք անլաց :

ԶՕՐԱՆՈՑԻՆ ՄԷՉ

(Եղանակ՝ դու խելօք հաշուով վաճառական ես)

Մենք ամէնքս ալ երիտասարդ ենք ,
 Մեր Բավիթյօնը երկ-հարիւր հօգի ,
 Սրտով հօգիով՝ բոլորս եղբայր ենք ,
 — Ի՛նչ ազգ կ ուզէք հոս , որդիք ո՞ր երկրի :

Երիտասարդ ենք՝ ամէնքս ալ մենք ,
 Ծաղիկը երկրին , մեր հայրենիքին ,
 Քսան տարեկան կտրիճ աղաք ենք ,
 Անո՛յչ մայրերու հատորն ենք սրտին :

Ի՛նչ աղւոր կեանք է , կեանք զօրանոցին ,
 Մէկտեղ կրթուիլ , միատեղ պառկիլ ,
 Ապրիլ եղբօր պէս , ճաշել միասին ,
 Իւրաքանչիւրս մեր երկրէն խօսիլ :

Զօրանոցին մէջ եղանք եղբայրներ ,
 — Համերաշխութիւնն հոս կտատարեալ է .
 Ամէնքս ալ ունինք մէյմէկ հատ մավզէր ,
 Համազգեստը մէկ՝ խաբի կերպատէ . —
 Ո՞վ կրնայ բաժնել զմեզ իրարմէ :



342-83

Չ Ի Ն Ի Ո Ր Ի Ն Կ Ե Ա Ն Ք Ը

(Եղանակ՝ Մասնաց ճակատէն ամպրոպ պատուեցաւ)

Ստամբեր կեանքի՝ մենք վարժուած ենք ,
Մեզ սիրելի է կեանքը զինւորի ,
Չարքաչ խիստ կեանքով՝ կը կրթուինք մենք ,
Վարժ ենք մենք այսօր կարգ ու կանոնի :

Կարգապահութիւնն՝ — մեր նշանաբան ,
Հնազանդութիւնն՝ — մեր ուխտն ու երդում :

Մեր տանապետը՝ է համակրելի ,
Ինչպէս մեր սպան կարիճ հասակով ,
Մեզ սիրեն իբր՝ եղբայր սիրելի ,
Եւ մենք կը սիրենք փոխադարձ սիրով :

Կարգապահութիւնն՝ . . . են .

Մենք վարժուած ենք՝ հնազանդ լինել ,
Մեզ հրամայեն՝ ուժգին՝ , գո՛ւ ձայնով ,
Քո՛ւտն , առնական , զինւորի ահե՛ղ
Չայնը մեզ գոռայ՝ անո՛ւչ հնչումով :

Կարգապահութիւնն՝ . . . են .

Հրամայելու կոչում նա չունի ,
Ո՛վ նախ չէ սորձած հնազանդիլը .
Ազատ ապրելու իրաւունք չունի ,
Ան որ չէ սիրած զինւորի կեանքը :

Կարգապահութիւնն՝ . . . են .

Մենք մարզուած ենք քաղել շարժելու ,
Փողին լեզուէն ալ բան հասկնալու .
Մէկ գծի վրայ կայնել պառկելու ,
Այդ վիճակին մէջ զէնք գործածելու :
Կարգապահութիւնն՝ . . . են .

Օսմանցի զինւորն ասով է որոշ ,
Թէեւ կազմուած տարբեր տարրերէ . —
Միակ Հայրենիք , Նպատակ , Դրօշ ,
Թէեւ կրօններ տարբեր իրարմէ :
Կարգապահութիւնն՝ . . . են .

Մ Ե Ր Ս Պ Ա Ն

(Եղանակ՝ Իբրեւ արծիւ սաւառնում էս)

Մեր սպան է՝ շաղցրաժպիտ և ազնիւ ,
Գեղատեսիլ ու վայելուչ հասակով ,
Անճյ զէմքով , քայլերն ամուր՝ առնացի ,
Շա՛տ վիհանձն , շատ բարի է նա սրտով :
Ասպետ է նա , գոհարասիրտ հերոս մ'է ,
Չինւոր է նա , միանգամայն զիտուն մ'է ,
Որուն համար՝ մենք կը գոհնք կեանքերնիս .
— Հայրենիքի աէր ու պաշտպան դիւցազն մ'է :

Երբոր կուգայ հեռուէն նա արծուի պէս ,
Շառաչելով քովի սուրը կա՛մ չղթան ,
Եւ ոսկեթել իր ուսնոցներ երբ փայլին ,
Կարծես լի լա կա՛մ մի Ֆերիֆ-գումանսան :
Երբոր ինքը հրամայէ խումբերուն ,
Ա՛հ , այն ատեն՝ տեսնելու է սխիլիլինն .
Լսելու է խրոխտ ձայնով որոտալն ,
Եւ իմանալ ոյժն ու կորով հօգիին :

Հ Ե Ծ Ե Ա Լ Զ Ի Ն Ի Ո Ր Ը

(Եղանակ՝ Երեւն պէտք է կառուիմք)

Գեղեցիկ ձիուս վրայ հեծնելով,
Ամէն օր արչաւ, մարդանք ամէն օր,
Երջանիկ եմ ես, յաւէն երջանիկ,
Քանի հայրենեաց զինուորն եմ այսօր:

Կրակոտ ձիուս վրայ երբ նետուիմ,
Ընկեր անրաժան՝ սուրս ալ շառաչէ,
Փայլուն՝ պաշտելի՝ պողպատէ սուրս,
Չուզելով կարծես՝ բաժնուիլ ինձմէ:

Բայց ձիուս գովեսան ես պէտք է ընեմ,
Արթուն և աշխոյժ ազնիւ նժոյգ մ'է,
Շագանակի է՝ մութ-կարմիր գոյնով,
Իմ հրամաննիս նա միշտ պատրաստ է:

Ականջներ տնկած, պոչը վեր բռնած,
Գլուխը բարձր, փայլուն բաշերով,
Ուշիմ-վառվառուն՝ աչքերու նայուածքն,
Քե՞ք ինձ պատճառէ՝ անհուն հաճոյքով:

Սանձէ՛ անգամ մը և հեծի՛ր վրան,
Գոզցես օդին մէջ ա՛լ պիտի թռչի.
Կատաղի բաներ կ'զգայ նա տակը,
Մտնել կը կարծէ մէջ պատերազմի:

Խրո՛խտ, ամենի՛ հեծաւ նժոյգը,
Քչեց զինուորը՝ զայն ահե՛ղ թափով,
Կատաղի թափով — դէպի հեռո՛ւ դաշտ,
— Անցաւ բլուրներ՝ օդը ճեղքելով:

Ծ Ո Վ Ա Յ Ի Ն - Զ Ի Ն Ի Ո Ր

(Եղանակ՝ վերհերով լի հանճեսա եմ)

Ծովի զինւորն՝ եմ ես չարքաշ,
Սիրահարած ծովերու,
Ալիքներու հետ կը խաղամ,
Կապո՛յտ, թո՛ւլս ալիքներու:

Կը պայքարինք և կը կոտինք,
Բնութեան հետ դժնշակ.
Լեռնանման ալեաց մէջը,
Խորատուզուինք մինչ յատակ:

Մենք ուժեղ ենք, մենք հզօր ենք,
Ունինք հուժկու բազուկներ,
Մարզուած ենք ծովի վրայ,
Աղի օդով զօրացեր:

Ծովն ու ցամաք մեզի համար
Միեւնոյն են ճիշդ խօսինք.
Բայց պատերազմ երբոր ծագի,
Ծովի վրայ՝ ա՛յլ մեր զէնք :

ՋԻՆԻՈՐԱԿԱՆ ՆՈՒԱԳԸ

(Եղանակ՝ Իբրեւ արծիւ . . .)

- = Ո՞վ կարող է նկարագրել նուազի ,
Անպատմելի ազգեցութիւնն ուղմաշունչ ,
Գլուխ անցած առաջնորդէ երբ ի դաշա՝
Մեր զինւորներն որք կը շարեն լուռ ու մունջ :
- = Մեր մարշն և կամ մարտէջիէզ երբ զարնեն ,
Ո՞վ կարող է չարտայայտուիլ նոյն պահուն ,
Կա մ արցունքով , կա՛մ խանդավառ յուզումով ,
— Ո՞վ չի յուզուի և մաղերը չի ցցուին :
- = Ի՞նչ մազնէս կայ նուազին մէջ որ հողին՝
Մինչեւ Աստուած՝ մինչեւ երկինք վերացնէ ,
Ան ի՞նչ տխուր եղանակ է և անո՛ւչ ,
Երբ մուգիզը՝ «մարտաշուր» նուազէ :
- = Եղանակներն տարբեր տարբեր կը զարնեն ,
Երբ լերան մէջ կը փնտուռի «Մողորեայն» ,
Կամ «վիրաւոր» կը փնտուռի դաշտին մէջ .
— Բայց նուազեն երբ «լաթանի» մեր մարշն . . .
- = Ի՞նչպէս մաշը չարհամարհեն զինւորներ ,
Իբրեւ արծիւ ի՞նչպէս առաջ չնկատին ,
Հրաշունչ «մարշն» ոգևորէ զինւորին . —
Մագնիսական՝ հրաշալի՛ գորութիւն :
- = Այսպէս կ'ըլլայ որ մարդիկն այն ասեն՝
Կը զինովնան , մահուան գիրկը կը նետուին ,
Եւ բազումներ՝ կաշմբուան , գորաւո՛ր ,
Կը վազցունեն արեան կարմիր կոհակներ :

Փ Ո Ղ Ա Շ Ա Ր

(Եղանակ՝ Չայն սուր ո՛վ Ճեղայ)

Փողահար եմ ես , վտանգի մարդը ,
Է՛ն մեծ Ֆեհային՝ կուռի դաշտումը ,
Աւա՛ղ , կուռի դաշտումը :
Ախր՛ր ինչո՞ւ ինձ մոռացել էք դուք ,
Բանակին հողին՝ ես եմ կուռումը :
Աւա՛ղ , ես եմ կուռումը :

Էլի՛ հերթապահն , բայց յաճախ ես եմ՝
Փրկողն ձեր հողին՝ հզօր բանակներ . —
Լուր ես եմ տալիս ձեզի ամէն ժամ ,
Թէկուզ իմ վրայ տեղան ուումբեր :
Աւա՛ղ , ես եմ կուռումը :

Կրակի մէջը կեցողը ես եմ ,
Թշնամին նշան՝ միշտ ինձ է առնում , —
Եւ գնդակներուն զո՛հ գնում յաճախ .
Ձի նշանառուն՝ շատ ճի՛շդ է խփում :
Աւա՛ղ , շատ ճի՛շդ է խփում :

Անձնուէր զինւոր ֆէտային ե՛ս եմ ,
Էլի՛ դուք գիտէք ի՞նչ է իմ տանջանք . —
Հէ՛նց սրա համար ես պարծենում եմ ,
— Հապա ինչո՞ւ ինձ այսպէս մոռացաք :
Աւա՛ղ , այսպէս մոռացաք :

Դ Ր Օ Շ Ա Կ

(Եղանակ՝ Գաւազակահայտի խումբ)

Պատերազմելու օրերն եկած են ,
Հրամանները մեզի արուած են .—
Կա՛ղմ պատրաստ լինել՝ սահման երթալու ,
Շարքեր կազմելու , զիրքեր բռնելու :

Մեր վաշտին քով է շահ Պրօշակը ,
Զոր նուիրած են հայ ազջիկները .—
Աստղն ու մահիկը իրար փաթթուած ,
Մետաքսեայ կարմիր կերպասով շինուած :

Հայրենիքի փառք , խորհրդանշան ,
Պարտականութեան նաև սուրբ նշան .—
Պրօշակ վառէ մեր խանդոտ սրտեր ,
Անոր կը յառին ամենուս աչքեր :

Նա երբ ծածանի մեր գունդին վրայ ,
Մեր հողիին հետ՝ երբ նա թրթռայ .—
Մենք արեան գետեր պիտ՝ հոսեցնենք ,
Եւ ամեն գիւնով զայն պիտ՝ պաշտպանենք :



ՄԱՆԿԱԲՈՒՅՆ ԳԵՂԱԳՈՐԾ

ԿՆԲԱՊԵՏ ԶՈՒԱՔԵԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՆԱԻԱՏՈՐՄ

(Եղանակ՝ Ջէյպէլլէրիգ՝ օան Էյլէրիգ)

Միջերկրական՝ գոռո՛ղ դու ծով՝ զո ջրերը տեսած են ,
Օսմանեան հին՝ ծովային սէգ՝ երկրագործը զօրութիւն .
Երեք-հարիւր սաղ միկնաւով՝ Կիպրոս կղզին պաշարուած ,
Որուն գէմը՝ համայն եւրոպ՝ իր ուժերով չէ բաւած :

Միջերկրական՝ նենգաւոր ծով՝ դու շատ բաներ տեսած ես ,
Դու տեսած ես, Թօրղուտ-Րէյիզն՝ անմատչելի այն հերոս,
Դու կը ճանչնաս անպարտելին՝ Պարպարունն-Խայրէտալին .
Քանի՛ անգամ զո ալիքներ մութ սրիւնով ներկեցին :

Միջերկրական՝ մոռցած չես դուն՝ օսմանեան մե՛ծ զօրու-
թիւն ,

Մարտքէն մինչ Կարմիր ծովը՝ անկից անդին Հնդկաց ծով ,
Մեր դրօշը վե՛հ յաղթական՝ ծածանած է դարերով ,
Այսօ՛ր նորէն՝ մենք կեանք առինք նոր նաւերով նոր
ոյժով :

ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ՏԵՍԱՐԱՆ

Ո՞վ չի սիրեր վե՛հ և վսեմ տեսարան ,
Ո՞վ չի սիրեր Արարական նժոյգը ,
Ո՞վ չի պաշտեր Վրաստանի գեղունին ,
Կավկասիոյ հզա՛րա խորճա լեռները :

Այս սարերուն վե՛հ փառահեղ բարձունքէն ,
Կը տեսնուի բազում վսե՛մ տեսարան .
Երկու ծովեր , երկու աշխարհ , լիճ , գետեր ,
— Հրաշայի , բայց հակոտնեայ-անման :

Արծիւներու ամպածրար բարձունքէն ,
 Հովերն միշտ մըրկայոյզ կը գտան . . .
 Փոթորկածուփ և Սև ծովու այս կողմէն ,
 Անսուշ ձայներ , քաղցր երգեր զիջեալան :

Մայլ խաւար՝ հոն զիշերներ ա՛ռելի՛ .
 Ասդին պայծառ Հուսնկայի գիշերներ ,
 Ի՛նչեր ի՛նչեր կը տեսնուին աւելի . . .
 — Ո՛վ չի սիրեր զիսել վսեմ պատկերներ :

Վսե՛մ բաներ կ'ուզէ՞ք որ ես պատմեմ զեռ —
 «Լուսինն եղնէ , իսկոյն և բի՛ւր աստեղներ ,
 Զեփիւռն շարժէ՛ լերանց համայն տերեւներ ,
 Մեծ-լեռն երգէ՛ ըմբոսաական դո՛ւ երգեր . . . » :

Անցեալի լու՛ռ՝ խաւարին սե՛ւ օրերուն ,
 Կը յաջորդեն պայծառ օրե՛ր արեւոտ ,
 Կայծակները չո՛ւտ կը հասնին երկինքէն ,
 Երբոր օդը՝ մոռայլ խաւար է ամպոտ :

Ի Մ Ա Ձ Գ Ը

Դառնացած էի ես ազգիս հանդէպ ,
 Երբոր իմ ազգը՝ ինկած սարուկ էր .
 Ո՛չ բարեկամը և ո՛չ թշնամին՝
 Կարող էր ճանչնալ . — այսչա՛փ ինկած էր :

Բռնապետական վա՛տ լուծին տակը ,
 Զիդն ու ուղեղը համակ թմրած էր .
 Շարժելու ճիգը մեռած՝ հոգւոյն մէջ ,
 Անկարո՛ղ ու թոյլ՝ այսչա՛փ ինկած էր :

Իրար ատելու , իրար քանդելու ,
 Վա՛տ ոյժ կար իր մէջ . — նա վաստացած էր .
 Կռիւ իր մէջը՝ ի՛ր եղբօրը դէմ ,
 Սարուկի ստոր՝ կռիւ կը մղէր :

Երբոր կարգը գար մեծ-մեծ ջարդելու
 Օղիին առջեւ . — ա՛մենից քաջ էր .
 Բայց երբ գործելու գար ժամանակը .
 Նա դասալիք էր . — ա՛յսչափ ինկած էր :

Ի տես այս ամէն աւերումներուն ,
 Իմ սիրաբ կոտրած՝ հոգիս տխուր էր ,
 Ազգէս յոյս չկար ա՛լ կենդանութեան ,
 Տկա՛ր ու խեղճուկ՝ ա՛յնչափ ինկած էր :

Յայնժամ կ'ըսէի՛ ես Պօթէֆի հետ ,
 «Տուէ՛ք զինովեամ՝ խմեմ ես գինի ,
 Որ ազգիս արարելը անգիտանամ ,
 Թէ՛ Փառքի՞ համար է թէ՛ Ամօքի» :

Բայց Արեւելքէն . . . ան մի հրա՛շք էր ,
 Սթափեցաւ մեր մեռած սարուկը .
 Գիտակից եղաւ իրեն վիճակին .
 — Ազատագրութեան բարձրացուց դրօ՛շը :

Պատու՛վ մեռնելու՝ ցուցուց ցանկութիւն ,
 Բան մնալ սարուկ՝ անարգուած րայան .
 Ուժով նա զարկաւ՝ մուրճը կո՛ւտ սալին ,
 Սալը փշրեցաւ . — Փա՛ռք Կուսակցութեան :

ԴԻԻՑԱԶՆՈՒՇԻՆ ՇԱԲԷ

Այն սոսկալի աւերումի օրերուն ,
 Երբ վառօթով կը խեղդուէր վե՛հ Սասուն ,
 Շէնիկ , Սէմալ , երբ պաշարուած խուժանով ,
 Տալոորիկի անցքն ալ փա՛կ էր սուփնով :

Հերոս Գրգօն երբ դաւով մը բռնեցին ,
 — Այս լեռնցիք գերի չեն տար՝ կը մեռնին
 Իր հարս Շաքէն ա՛լ կոխէն յուսահատ ,
 Այծեամի պէս վեր բարձրացաւ սարն ազատ :

Հրացանն ուսին՝ տղան սեղմած իր կուրծքին ,
 Կայնեցաւ նա սեպ ժայռի մը գլուխին .
 Անկուշտ աչքով՝ նայեցաւ իր վաթանին ,
 — Դու միշտ ապրէ՛ , կրուէ՛ ըսաւ , դա՛րկ ուժգին :

Ալ չէր կրնար շատ սպասել՝ կուգային ,
 Գոռում գոչումն մօտեցած էր խուժանին .
 Վերջին անգամ Շաքէն նայեց վաթանին ,
 — Իողաց երկինք , թնդաց խորը անդունդին ...

Գիշերն հասաւ , շա՛րին կ'երգէր ողբագին ,
 Մուսլ խաւար՝ պատեց լեռը վերստին .
 Բայց լուսինը երբ արձակեց իր շողեր ,
 Ճանչցաւ վա՛րը հերոսունին որ ննջէր ... :

ԱՅԸՊ ՏԸՐ ՈՒԹԱՆ

(Եղանակ՝ Գու խելօf հաւուով . . .)

Էշրաֆսըն , փարան , մալ ու միւլքէրին
 Թաչկընտըր , էվվէ թ , Ալլահ արթաըրսըն ,
 Պու սէրվէթտէն խայըր կէօրմէզսէ վաթան ,
 Ալչաք օլուրսուն , այըպ տըր , ութա՛ն :

Իկիթսին , էվվէ թ , պէյսին մուղաֆֆէր ,
 Շան ու չէօրէթին տիւնեայը կէզէր .
 Գըրըճընտան խայըր կէօրմէզսէ վաթան :
 Ալչա՛ք օլուրսուն , այըպ տըր , ութա՛ն :

Ազլ ու սիասի , վար տըր խտրէ ,
 Սէվկիւլիւ օլտուն Շահ ու Սուլթանէ ,
 Պու ազիլտէն խայըր կէօրմէզսէ վաթան ,
 Ալչաքսըն էվվէթ , այըպ տըր , ութա՛ն :

Հիւնէր վար սէնտէ , պու տա Ալլահտան ,
 Էլ հիւնէրինի՛ մէտն իտէր ճիհան .
 Էլլէրինտէն խայըր կէօրմէզսէ վաթան ,
 Էլին գըրըլսը՛ն , այըպ տըր , ութա՛ն :

Ալլիմսին պէօլիւք , իլ՛ ու թահսիլին
 Իշիտիլմիշ տիր , վէ տէ չէօրէթին .
 Պու իլլիմտէն խայըր կէօրմէզսէ վաթան ,
 Պէյնին գուրուսո՛ւն , այըպ տըր , ութա՛ն :

Վերիլտի Հազգտան խոթիտատ տանա ,
Քիթապլար եագարն՝ իշիթտի տինեսա ,
Գալէմինտէն խայրր կէօր մէզսէ վաթան ,
Գալպին գրրըլսը՛ն , այրսլ տրր , ութա՛ն :

Ալլահտան տանա վերիլտի լիտան ,
Նութըլարըն հալըլ խոթյօր հէյրան ,
Պու նութըլարտան խայրր կէօր մէզսէ վաթան ,
Տիլին թութուլսը՛ն , այրսլ տրր , ութա՛ն :
Նաշտարն վաթան :

Բ. ԲԱԹԻՊԱ



ԳԻՆ | ՂՐՈՒՇ

24247
2013

